արուրա կամ լատին jugerum, որ իրօք հողաչափ է, մեծ բան չէ եւ անում է մօտ քառորդ հեկտար, գրեթէ նոյնչափ դեսիատին:

Հերոդոտ յիշում է արուրա որպէս Եգիպտոսում ընդունուած չափ, հաւասար հարիւր անդամ հարիւր քառակուսի կանգուն տարածութեան: Իսկ jugerum ըստ Պլենի 240+120 ոտ տարածութիւն է:

Երկու չափն էլ հաւասարամեծ են եւ մօտ քառորդ դեսիատին:

Այս հաշուով գիւղական երէցը Տրդատի շնորհիւ պիտի ստանար ոչ աւելի քան մի դեսիատին հող, իսկ Պապի կրճատումից յետոյ մի քառորդ դեսիատին:

Դուրս է գալիս որ բարեպաշտ Տրդատ թագաւորը աւելի առատաձեռն չէր եկեղեցու հանդէպ, քան այժմուան «ժողովրդական դորձավար» Երզնկեանը, որ մեծ սէր չունի դէպի եկեղեցին: Իսկ խեղճ Պապը միթէ այնքան ծանծաղամիտ էր երկրագործական խնդիրներում որ կարծէր թէ քառորդ դեսիատինով կարելի է տուն պահել:

Հասանք անհեթեթութեան եւ պատճառը յոյն թարգմանիչը չէ: Արուրա այստեղ դորձ է ածուած իր իսկական իմաստով, որ է հող՝ վարած թէ վարելի: Թարգմանութիւնը հաւատարիմ է մնացել հայ բնագրին: Պ. Մանանդեանի նորալուր մեկնութեան միակ հիմքը ընկնում է:

Ագաթանգեղոսը, ինչպէս ասացինք, ներկայ դէպքում կախուած է Փաւստոսից եւ աւելի բան չէ ասում քան իր աղբիւրը:

Փաւստոս ասում է որ Պապը եկեղեցու հողը կրճատեց եւ թողեց ամէն մի գիւղում երկուական հող — երկու հոգի՝ մի երէց եւ մի սարկաւագ պահելու համար, ուրիշ խօսքով ամէն մէկին ընկնում է մի հող: Երէցը եւ սարկաւագ՝ երկու հոգի չեն, երկու տուն են, երկու երդ: Երկու երդը երկու հող է ստանում Պապից, ստացած հողը, ուրեմն, կարելի է կոչել հող երդոյ: Տրդատը աւելի ասուածապաշտ էր քան Պապը, ուստի նրան Ագաթանգեղոս վերագրում է երկու անդամ աւելի հող քան Փաւստոս Պապին որ է «չորս հողս երդոյ»: Իսկ Փաւստոսի «եօթն հող» մեկնում է այն մտքով որ այդ աւանների քահանայութեան բաժինն էր:

Ագաթանգեղոս ոչնչով չի խանգարում Փաւստոսի անորոշութիւնը: Պատասխանատուն մնում է ինքը Փաւստոս: Ի՞նչ է նշանակում այդ անորոշութիւնը:

Պապը ոչ միայն հողն է կարճում, այլ եւ «զայն ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութեան 'ունելով?' զեղբարս եւ զորդիս երիցանցն եւ սարկաւագացն», այսինքն՝ եղած հողն էր ծանրաբեռնում նրանով, որ երէցների եւ սարկաւագների որդիներին 'ծառայութեան' էր առնում: Ծառայութիւն այստեղ նշանակ է հարկատուութեան:

Այս տողերը տանում են մեզ դէպի արտաքին աղբիւր եւ կասկածելի են դարձնում Պապին վերագրուած միջոցները եկեղեցական հողերի դէմ:

Հարկաւոր բացատրութիւնը տալու էինք Փաւստոս որպէս պատմագէտ ուսումնասիրութեան մէջ, որի մի մասը միայն լոյս տեսաւ Պետերբուրգի Christianski Vostok ռուս հանդէսում:

Թէեւ վէճը տերմինի մասին է եւ պատմական հաւաստիութիւնը աննշանակ է այս դէպքում, բայց հարկաւոր ենք համարում մի քանի խօսք ասել:

Յայտնի է, որ Ներսէսի կեանքը այն ձեւով որպէս մտած է Փաւստոսի պատմութեան մէջ կրում է օտար ազդեցութեան հետքեր: Կան գծեր, որ առնուած են Բարսեղ Կեսարացու կեանքից:

Կեսարիոյ եպիսկոպոսը ժամանակակից էր Ներսէսին, տեսել էր նրա մահը եւ անծանօթ չէր հայ իրադարձումներին: Նրա թղթերից մէկը ուղղուած է ոմն կոմս Տերենտի, որ հաւանօրէն այն անձն է, որին յիշում է Փաւստոս եւ որը կայսեր զօրքերով եկաւ Հայաստան, նպաստելու Պապ թագաւորին գրաւելու հայկական դահը: Կեսարացին պատկառելի դէմք է եւ մեծ հեղինակութիւն մեր եկեղեցու համար:

Առանձին արժէք ունի մեզ այժմ զբաղեցնող հարցի տեսակէտից Բարսեղի մի նամակը, գրուած ոմն Մոդեստի: Կեսարիոյ հայրապետն գրում է, որ եկեղեցու պաշտօնեաները «երէց-